

*Շրջակա միջավայրի նախարարության
«Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ*

ԱԳՐՈՏԵՐՆԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

2024


Մայիսի երրորդ տասնօրյակ

Տեղեկագիրը կազմել է ագրոոդերևութաբանության բաժինը՝ մասնագիտացված ագրոոդերևութաբանական կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:

Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Մուրենյան

ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ


Մայիսի երրորդ տասնօրյակում օդի միջին ջերմաստիճանը հանրապետության շրջանների զգալի մասում եղել է նորմայի սահմաններում մի փոքր դրական ու բացասական շեղումներով:



Տասնօրյակի ամենաբարձր ջերմաստիճանները դիտվել են մայիսի 30, 31-ին. Տավուշում՝ գրանցվել է $+27...+30^{\circ}\text{C}$, Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ $+24...+26^{\circ}\text{C}$, նախալեռնային շրջաններում՝ $+32...+34^{\circ}\text{C}$, Սյունիքի հովտային շրջաններում՝ $+31...+33^{\circ}\text{C}$, նախալեռնային շրջաններում՝ $+25...+27^{\circ}\text{C}$, Շիրակում՝ $+22...+27^{\circ}\text{C}$, Կոտայքի լեռնային շրջաններում՝ $+23...+25^{\circ}\text{C}$, նախալեռնային շրջաններում՝ $+26...+28^{\circ}\text{C}$, Գեղարքունիքում՝ $+22...+26^{\circ}\text{C}$, Լոռիում՝ $+25...+27^{\circ}\text{C}$, Արմավիրում, Արարատում՝ $+30...+34^{\circ}\text{C}$, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ $+22...+24^{\circ}\text{C}$, նախալեռներում՝ $+24...+27^{\circ}\text{C}$ (Աշտարակ՝ $+31^{\circ}\text{C}$):

Տասնօրյակի ամենացածր ջերմաստիճանները դիտվել են մայիսի 23-ին. Տավուշում՝ $+5...+9^{\circ}\text{C}$, Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ $+1...+3^{\circ}\text{C}$, նախալեռնային շրջաններում՝ $+7...+9^{\circ}\text{C}$, Սյունիքի հովտային շրջաններում՝ $+8...+10^{\circ}\text{C}$, նախալեռնային շրջաններում՝ $+4...+6^{\circ}\text{C}$, Շիրակում՝ $+1...+6^{\circ}\text{C}$, Կոտայքի լեռնային շրջաններում՝ $0...+4^{\circ}\text{C}$, նախալեռնային շրջաններում՝ $+7...+9^{\circ}\text{C}$, Գեղարքունիքում՝ $+1...+5^{\circ}\text{C}$, Լոռիում՝ $+3...+7^{\circ}\text{C}$, Արմավիրում, Արարատում՝ $+10...+12^{\circ}\text{C}$, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ $0...+2^{\circ}\text{C}$, նախալեռներում՝ $+7...+10^{\circ}\text{C}$:


Տասնօրյակային տեղումներ



Մայիսի 23-27-ին ողջ հանրապետությունում դիտվել է անձրև և ամպրոպ, առանձին հատվածներում նաև կարկուտ: Հարկապես մասայական և ավերիչ կարկառահարություն է դիտվել մայիսի 25-ին, որը ընդգրկել է Արմավիրի, Արագածոտնի և Կոտայքի մարզերի մեծ մասը:










Տասնօրյակի ընթացքում տեղումների գումարային քանակը Շիրակում կազմել է 57-72մմ (149-259%), Լոռիում՝ 82-108մմ (227-263%), Տավուշում՝ 51-81մմ (147-342%), Արագածոտնի լեռնային շրջաններում՝ 59-61մմ (219-246%), նախալեռներում՝ 29-34մմ (139-262%), Գեղարքունիքում՝ 23-90մմ (105-239%), Կոտայքի լեռնային շրջաններում 48-80մմ (188-347%), նախալեռներում՝ 51մմ (265%), Արարատում՝ 11-21մմ (109-237%), Արմավիրում՝ 15-32մմ (129-263%), Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ 20մմ (62%), նախալեռներում՝ 4մմ (29%), Սյունիքի նախալեռնային շրջաններում՝ 6-39մմ (28-127%), հովտային շրջաններում՝ 17-33մմ (121-127%):

Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանը



Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանները գրանցվել են մայիսի 22-ին և 23-ին. լեռնային շրջաններում՝ -1...+1°C, Լոռու և Սյունիքի նախալեռնային շրջաններում՝ 0...+3°C, Արարատյան դաշտում, Տավուշի և Սյունիքի հովտային շրջաններում՝ +6...+9°C:

Վեգետացիոն ինդեքսի ընթացիկ ընթացքն անցյալ տարվա և բազմամյա միջինի համեմատ



Հացահատիկային մշակաբույսեր



Հացահատիկային մշակաբույսերը լեռնային շրջաններում գտնվել են ցողունակալման և ծեղացողունի ներքին հանգույցների առաջացման, նախալեռներում՝ հասկակալման, հովտային շրջաններում՝ կաթնային հասունացման փուլերում, բույսի բարձրությունը տասնորյակի վերջին կազմել է 78-85սմ, լեռնային շրջաններում՝ 44-52սմ:Տասնորյակային աճը կազմել է 10-13 սմ:

Մերձավանում աշնանացան գարու դաշտում բույսի աճի և զարգացման համար անհրաժեշտ հողի արդյունավետ խոնավության պաշարները 0-10սմ շերտում կազմել են 22մմ, 0-20սմ շերտում՝ 49մմ, 0-30սմ շերտում՝ 85մմ, որն անցյալ տասնորյակի համեմատ բարձրացել է 5-18 մմ-ով:

Եգիպտացորենը գտնվել է 3-5-րդ տերևի փուլում, բույսի բարձրությունը կազմել է 42սմ:



Պղպարուններ և խաղող

Հովտային շրջաններում սկսվել է կորիզավոր պտղատուների պտղի հասունացումը, նախալեռնային շրջաններում շարունակվել, լեռնային շրջաններում սկսվել հնդավորների ձևավորումը:

Արարատյան դաշտում դիտվել է խաղողի վազի մասսայական ծաղկում: Նախալեռնային շրջաններում այն գտնվում է ծաղկաբույլերի առաջացման փուլում:



Բանջարանոցային մշակաբույսեր և կարտոֆիլ

Հովտային և որոշ նախալեռնային շրջաններում դիտվել է բանջարանոցային մշակաբույսերի կողային ընձյուղների, տեղ-տեղ երրորդ տերևի և ծաղկաբույլերի առաջացում: Ձմերուկը դեռ գտնվել է երրորդ տերևի փուլում:

Նախալեռներում կարտոֆիլը ծաղկել է, լեռնային շրջաններում դիտվել է կարտոֆիլի կողային ընձյուղները և կաղամբի երրորդ տերևը:



Խոտաբույսեր և ծխախոտ



Առվույտ

Հովտային շրջաններում շարունակվել է առվույտի ցողունի աճ առաջին հունձից հետո: Լեռնային շրջաններում շարունակվել է կորնգանի ցողունի զարգացումը:

Ծխախոտի մոտ առաջացել են 5-7-րդ տերևները: